## ՀՀ գենդերային բռնության 2011-2015թթ. ռազմավարական ծրագրի շրջանակներում Արմավիրի մարզում 2013թ. իրականացված միջոցառումների մասին

| Հ/Հ | Միջոցառման անվանումը | Կատարված աշխատանքը | Ֆինանսավորման աղբյուրը |
|---|---|---|---|
| 1 | Մարզային ենթակայության կազմակերպություններում, տեղական ինքնակառավարման մարմիններում /այդ թվում՝ համայնքների ղեկավարների աշխատակազմ,բուժ հիմնարկներ, կրթական հաստատություններ/ գենդերային բռնության վերաբերյալ իրազեկման աշխատանքների իրականացում | Համայնքներում, բուժհիմնարկներում և  հանրակրթական դպրոցներում կազմակերպված հանդիպումների և  կլոր սեղանների արդյունքում նկատվում է բնակչության լայն շրջանում գենդերային բռնությանը նպաստող կարծրատիպերի փոխակերպում և բռնության երևույթի հանդեպ անհանդուրժողականության ձևավորում | միջազգային և տեղական հ/կ-ներ |
| 2 | Մարզի հանրակրթական դպրոցների բարձր դասարաններում  գենդերային  բռնության կանխարգելման նպատակով   համապատասխան թեմաներով միջոցառումների, կինոդիտումների կազմակերպում, քննարկում | Հանրակրթական դպրոցներում բարձր դասարանների աշակերտների շրջանում անցկացվել են ֆորումներ և քննարկումներ գենդերային բռնության կանխարգելման և հասարակության մեջ ընտանիքի դերին վերաբերվող թեմաների շուրջ,  որի արդյունքում դեռահասների մոտ զգալիորեն բարձրացել է  իրազեկվածությունը | միջազգային և տեղական հ/կ-ներ |
| 3 | Մարզում գենդերային բռնության ենթարկված անձանց բացահայտում և վիճակի բարելավում | Համայնքներում իրականացվել է  գենդերային բռնության երևույթի տարածվածության գնահատում, մշակվել և ներդրվել է մշտադիտարկման համակարգ, տարվել է բռնության դեպքերի բացահայտման և դրանք առաջացնող  պատճառների հետազոտման աշխատանքներ | ֆինանսավորում չի պահանջվում |
| 4 | Հասարակության տարբեր խմբերի, այդ թվում՝ երիտասարդների և առավել խոցելի խմբերի շրջանում գենդերային բռնության երևույթի վերաբերյալ ուսուցողական դասընթացների իրականացում | Կազմակերպվել  են  դասընթացներ ընտանիքում ծնողական պարտականությունների նկատմամբ պատասխանատվության կարևորության, ընտանիքում բռնության բացառման, գենդերային բռնության կանխարգելման վերաբերյալ | մարզպետարան և հ/կ-ներ |

| | | | |
|---|---|---|---|
| 5 | ՁԼՄ-ներում գենդերային բռնության հիմնախնդիրներին վերաբերող տեսահոլովակների տեղադրում | Հասարակության տարբեր խմբերում տարածվել է գենդերային բռնության երևույթի և դրա դեմ պայքարին վերաբերվող տեղեկատվական նյութեր, մարզային հեռուստալիքներով հեռարձակվել են հատուկ հաղորդաշարեր և առանձին թիրախային խմբերին ուղղված սոցիալական գովազդներ | ֆինանսավորում չի պահանջվում |
| 6 | Մարզի բուժհաստատություններում սեռերի կանխորոշման և կանխարգելման խնդրի ուղղությամբ հետազոտության իրականացում և արդյունքների քննարկում | Մարզի բուժհաստատություններում իրականացված իրավիճակային ուսումնասիրության և վերլուծության արդյունքները դրական էին, քանի որ զգալիորեն նվազել էին սեռերի կանխորոշման և կանխարգելման խնդիրները | մարզպետարան և հ/կ-ներ |